Պատանի բնախույզների ակումբ

(խմբակի ծրագիր)

2023-2024 ուս. տարի

1.**Նպատակը և խնդիրները՝** տալ հետաքրքիր տեղեկություններ երկիր մոլորակի աշխարհագրական թաղանթի մասին՝ աշխարհագրության դասագրքի էջերից դուրս: Առաջացնել հետաքրքրություն առարկայի նկատմամբ, ընդլայնել աշակերտի մտահորիզոնը: Սովորեցնել համադրել, վերլուծել փաստերը, գտնել պատճառահետևանքային կապերը, ձևավորել վերաբերմունք բնության ու նրա պահպանության նկատմամբ:

Գործնական աշխատանքների նպատակը տեսական գիտելիքների կիրառումն է առօրյա կյանքում: Խնդիրների լուծման և գործնական աշխատանքների միջոցով գիտելիքի իմացությունը օգտագործելը որոշակի կարողությունների, վերաբերմունքի ձևավորման համար: Հնարավորություն տալ՝ տարբեր իրավիճակներում ստեղծագործական մոտեցում ցուցաբերելու:

2.**Վերջնարդյունք՝** այս դասընթացն ավարտելու արդյունքում աշակերտները պետք է ունենան հետաքրքիր տեղեկությունները, փաստերը համադրելու, վերլուծելու, պատճառահետևանքային կապերը բացահայտելու կարողունակություն, ունենան բնության, նրա երևույթների ու մասերի ամբողջականության, պահպանության վերաբերյալ վերաբերմունք: Գիտակցեն բնապահպանության գործում իրենց պարտականությունն ու դերը, մասնակցեն այդ գործընթացին:

Գործնական աշխատանքների վերջնարդյունք՝ աշակերտը կկարողանա ոչ միայն համադրել, համեմատել, պատճառահետևանքային կապերը տեսնել, վերլուծել, այլև այդ գիտելիքները կիրառել առօրյայում, գործնական հմտություններ ձեռք կբերեն (խարույկի վառում, գետի, բլրի կամ հեղեղատի հետազոտում, գետի թեքության, ծախսի հաշվում, բնակավայրի տեղանունաբանության ուսումնասիրություն, կողմնորոշում տեղանքում, հատակագծի կազմում), կձևավորվի վերաբերմունք՝ երկիր մոլորակի բնության, նրա ռեսուրսների խնայողության և պահպանության վերաբերյալ:

3. Հատկացվող ընդհանուր ժամաքանակ-68 ժամ

4. Սովորողների տարիքային խումբը – 5-7-րդ դասարանների աշակերտներ

5. Բովանդակությունը

□Պատանի բնախույզների□ խմբակի աշխատանքային պլան

1	Աշխարհագրական հայտնագործությունների պատմությունից	1 ժամ
2	Արկտիկայի յուրացումը	1 ժամ
3	Աշխարհագրական □փակումներ□	1 ժամ
4	Երկիրը գու՞նդ է	1 ժամ
5	Վիթխարի մագնիսը	1 ժամ
6	Մեր օգնականը՝ քարտեզը	1 ժամ
7	Աշխարհագրական անունները	1 ժամ
8	Լողու՞մ են արդյոք մայրցամաքները	1 ժամ
9	Ինչպե՞ս են օգտակար հանածոներ որոնում	1 ժամ
10	Կան արդյոք անօգտակար հանածոներ	1 ժամ
11	Սահանքներ և ջրվեժներ	1 ժամ
12	Երկնագույն աշխարհամասի գանձերը	1 ժամ
13	Օվկիանոսի կանաչ հարստությունը	1 ժամ
14	□Անհանգիստ□ մոլորակ	2 ժամ
15	Քարերը □պատմում են□	1 ժամ
16	Բոցերի մեջ ծնվածները	1 ժամ
17	Արեգակի պահեստարանները	1 ժամ
18	Երկրի երկնագույն □զարկերակները□, գետերի □բնավորությունները□	1 ժամ
19	Մարդու ստեղծած □ծովերը□	1 ժամ
20	Ինչու է տեղի ունենում Կասպիականի ծանծաղեցումը	1 ժամ
21	Կհագեցնե՞նք արդյոք մեր ծարավը	1 ժամ
22	□Կարծր օվկիանոսներ□	1 ժամ
23	Երկրի □հագուստը□, մեր բարեկամ օդը	1 ժամ
24	Մայրցամաքների ջրային ջեռուցումը	1 ժամ
25	Կարելի՞է առաջացնել արհեստական անձրև	1 ժամ
26	Վաղը ինչպիսի եղանակ կլինի, կենդանի բարոմետրեր	1 ժամ
27	Միասնական օրգանիզմ	1 ժամ
28	Բնական լաբորատորիաներ	1 ժամ
29	Բնությունը և մարդու առողջությունը	1 ժամ
30	Մեզ սնող հողը	1 ժամ
31	Մեր կանաչ □բարեկամը□	1 ժամ
32	Մենք բնության մի մասն ենք	1 ժամ
33	Մոլորակի բնակչությունը	1 ժամ
34	Ոչ սովորական հուշարձաններ	1 ժամ
35	Հետաքրքրաշարժ հարցեր աշխարհագրության վերաբերյալ	10 ժամ
36	Բարդ խնդիրների լուծում	10 ժամ
37	Աշխարհագրական հանելուկներ և ռեբուսներ	3 ժամ
38	Գործնական աշխատանքներ (խարույկներ, բնակավայրի տեղագրական հատակագծի կազմում, մեր բնակավայրի տեղանունաբանության հետազոտություն, հեղեղատի և բլրի հետազոտություն և նկարագրում, գետի և անտառի	10 ժամ

	հետազոտում և նկարագրում, հողի մեխանիկական կազմի որոշում, քամու արագության ուղղության և ուժգնության չափում)	

6. Շարունակականությունը՝ հաջորդ ուս.տարում անցում կատարել բնական աշխարհագրությունից դեպի հասարակական աշխարհագրության թեմաներ, իսկ 9-րդ դասարանում՝ գործնական հմտություններ ձևավորել, նախագծային աշխատանքներ իրականացնել ՀՀ բնությանը և տնտեսությանը վերաբերող թեմաներից:

7. Նյութատեխնիկական բազան – զանազան քարտեզներ, հատակագծեր, կողմնացույց, վայրկենաչափ, չափերիզ, աստղադիտակ, եռոտանի, պլանշետ, մանրադիտակ, գծագրական պարագաներ, և այլն:

8. Օգտագործված գրականություն.

1. Ն. Ա. Մաքսիմով. Աշխարհագրության դասագրքի էջերից դուրս, Երևան, 1984թ.,
2. Կ. Ավետիսյան. Պատանի աշխարհագրագետ,Երևան, 1985թ.,
3. Հ.Գաբրիելյան. Մարդը և ջրային տարերքը, Երևան 1983,
4. Ռ. Հովսեփյան. Վ. Վարդազարյան, Ն. Հայրապետյան, Լ. Դռնոյան. Կյանքի հմտություններ, Երևան 1999թ,
5. Վ. Մեզենցեվ. Հրաշքների հանրագիտարան, Երևան 1974թ.
6. Հ.Չտչյան, Աշխարհագրական հանելուկներ, խաղեր, Երևան, 1977թ,
7. Ա. Գյուրջինյան. Աշխարհագրությունը հետաքրքրաշարժ հարցերի և խնդիրների մեջ,
8. Ն. Գրոբշտեյն. Հետաքրքրաշարժ հարցեր աշխարհագրությունից, Երևան 1969թ.
9. Ա. Խաչատրյան. Աշխարհագրություն (ուսումնաօժանդակ ձեռնարկ), Երևան, 2016թ.
10. Ա. Խաչատրյան. Աշխարհագրություն + Խնդրագիրք,
11. Ի. Մոժեյկո. 7 և 37 հրաշալիք, Երևան, 1984թ.
12. С. Марков. Земной круг, 1971 г.,
13. В. Ярошенко. Экспедиция живая вода 1975 г.,
14. П. Остапенко. Ну и погода сегодня, 1977 г.

Digitally signed by TASHCHYAN ARTUR 2014820899

Date: 2023.09.18 11:21 AMT